



**ՄՐԱՌ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

**Փետրվարի 26-ին, հինգշաբթի.—Տօն
Սրբոց Վարդանանց օրավարացն մերոց
հազար երեսուն և վեց վկայիցն, որք կա-
տարեցան ի մեծի պատերազմին:**

Ինչպես միշտ, այս տարի նոյյնական մեծ
հանդիսավորությամբ Մայր Աթոռում նըշ-
վեցին Վարդանանց տոնն ու Վեհափառ
Հայրապետի անվանակոչության տարեդար-
ձը:

Փետրվարի 25-ին, չորեքշաբթի օրը, երե-
կոյան ժամը 17-ին, Մայր տաճարում կա-
տարվեց Վարդանանց նախատոնակը: Մայր
Աթոռում միաբանության և Մայր տաճարի
դպրաց դասի համատեղ կատարմամբ հրն-
չեց «Նորահրաշ» շարականը, որով մի ան-
գամ ևս նշվեցին հայրենիքի և հավատու-
թի համար նախատակված անմահ մարտիկնե-
ների անունները՝ ներկաների սրտերը լցնե-
լով գոհունակության և հպարտության վեհ
զգացումներով:

Փետրվարի 26-ին, հինգշաբթի օրը, ա-
ռավուտյան ժամը 10.30-ին, Մայր տաճա-
րում, Սվագ խորանի վրա, սկսվեց օրվա
հանդիսավոր սուրբ պատարագը: Պատու-
թիչն էր հոգևոր ճեմարանի տեսուչ Տ.
Եղիշիկ քհն. Պետրոսյանը:

Ժամը 11.30-ին եկեղեցական հանդիսա-
վոր թափորով Մայր տաճար իշալ Ամե-
նայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հավարտ և պատարագի պատարագիչ
տեր հայրը ոգևորիչ և հայրենասիրական
քարոզ խոսեց՝ նվիրված Վարդանանց հե-
րոսամարտին.

**S. ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
ՔԱՐՈՁԸ**

«Յանուն Հօր և Որդուոյ և Հոգուոյն Սրբոյ,
ամեն»:

«Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր
մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մե-
ռանիցի, բազում արդինս առնել» (Հովի.
Ժ 24):

Սրբելի հավատացյալ ժողովուրդ, մեր
Տեր Հիսուս Քրիստոսի այս խոսքերով է
երկու հազար տարի շարունակ ապրել
Քրիստոսի Եկեղեցին, ինչպես նաև Հայոց
Եկեղեցին, որ իր դարերի պատմության
ընթացքում բազմաթիվ անգամներ տվել է
այս խոսքերի ճշմարտության ապացուցը,
որոնցից մեկն է Ավարայրի ճակատամար-
տր՝ Վարդանանց հերոսամարտը: Հայ Եկե-
ղեցին սրբացրել է Ավարայրի ճակատա-
մարտում գորիված հազար երեսունվեց մար-
տիկների հիշատակը՝ սպարապետ Վար-
դան Մամիկոնյանի գլխավորությամբ, և
տոնում է ամեն տարի մեծ շուքով Վարդա-
նանց ամենով: Քրիստոնեության պատ-
մության առաջին իսկ օրերից բազմաթիվ,
տասնյակ հազարավոր, գույն հարյուր հա-
զարավոր քրիստոնյաներ ճակատակվել են
Քրիստոսի համար, սկսած Ավարայրն ա-
ռաջին դեպքն էր, երբ ամբողջ մի ժողո-
վուրդ էր իշնում ճակատակության:

Դարեր, շատ դարեր առաջ, երբ Հայա-
տան աշխարհի գետերը նոր էին զուլավել
ձնհալի պղտոր շրերից, երբ կանաչն իր

քնքությունն էր տարածել լեռների ու ձորերի վրա, երբ Հայաստան աշխարհում ամենուր տեղերից սփովում էր հացի բույրը և լավում նորածին մանկան ճիշը, պարսից երկու հարյուր հազարանց ահարկու բանակը մտավ Հայոց աշխարհ:

Թշնամու բանակները միշտ էլ ահ ու սարսափ են ազդել շինականների վրա: Այս անգամ, սակայն, հայ շինականը չահարթելից: Հզրո բանակները առջև միշտ էլ նորաթիվ բանակները նահանջել են: Այս անգամ, սակայն, հայ փոքրաթիվ զորքը ընդառաջ ելավ: Եվ եթե Քրիստոս Պետրոս առաքյալի ձեռքից վեցորեկ էր սուրբ և նրա ձեռքին քարոզության գավազան տվել, ապա ապ անգամ հայ հոգևորականները իրենց ձեռքի քարոզական գավազանը սրի էին վերածել և Ավարայր իշել:

Դա 451 թվականն էր, մայիսյան մի առավոտ, երբ Տղմուտ գետի ափերը տերում էին բանակների ծանրության ներքո. գետի հարավային կողմում անթիվ-անհամար ու անծայրածիր պարսից բանակն էր, իսկ հյուսիսային կողմում կանգնած էին շինականներ, վանականներ, փոքրաթիվ մի զորք, որոնք Ավարայր էին իշել ոչ թե մեռնելու, այլ հայոցներու համար:

Հինգերորդ դարն էր դա, մի դար, որ Հայ Եկեղեցու պատմության մեջ ճշանավորվում է երկու երևույթով. գրերի գյուտ ու աննախընթաց, աներևանակայիշի ու անհաղթահարելի գրական-մշակութային թոռնիք, ինչպես նաև պատերազմներ՝ հանուն Հիսուսի և հանուն Հայունյաց: Հայաստան աշխարհը դարերի խորքից գտնվելով երկու հզրո պատությունների՝ Հռոմեական կայսրության և Պարսից թագավորության մեջտեղում, միշտ էլ ենթարկվել է այս կամ այն կողմից քաղաքական ազդեցությանը: Չորրորդ դարի սկզբին, երբ նաև Հայաստանում, ապա Հռոմեական կայսրության մեջ քրիստոնությունը դարձավ պատեական կրոն, հայերի տրամադրությունները թերվեցին դեպի իրենց արևմտյան հարևանը: Անշուշտ, Պարսից պետությունը չէր կարող անտարբեր նայել այս ամենին: Նա բացմից հորդորներով, շնորհարաշնությամբ, կաշառքով, ինչպես նաև սրով ու սարսափով փորձել էր գրադաշտականությունը տարածել Հայոց աշխարհում, որպեսզի հայերը կրկին դառնան իրենց կողմնակիցներն ու դաշնակիցները: Եվ երբեմն-երբեմն Պարսկաստանին սահմանակից Հայոց հշիաններ տուրք էին տվել պարսից կրոնին, ինչպես օրինակ Սերուժան Արծորունին և Վահան Մամիկոնյանը՝ Դ դարում:

Հինգերորդ դարն էր, երբ Հայաստանի մեծ մասն այլևս ենթարկվում էր պարսից

իշխանությանը. Պարսիկ կառավարությունը մեկ անգամ ևս ձեռնարկեց, այս անգամ արդեն ամենայն վճռականությամբ, մեկ ընդմիջությունուն վերացնել Հայոց աշխարհից քրիստոնության լույսը և սփել գրադաշտական ատրուշաների կրակը: Փորձությունը մեծ էր, սայթաքող ները՝ շատ: Նրանք սակայն, որոնք հավատարիմ մնացին Քրիստոսի վարդապետությանը, նրանք, որոնց հոգու մեջ դողանջում էր հազիկ կես դար առաջ հայերեն դարձած քրիստոնությունը, ու ազգադաշտ իշան: Նրանք քաջ գիտեին, որ ահարկու թշնամուց ֆիզիկապես պարտություն կրելը միանգամայն օրինաչափ էր: Սակայն ֆիզիկապես արդեն Հայոց աշխարհը պարսիկների հշիանության տակ էր: Նրանք ուզմադաշտ իշան, որպեսզի ապացուեն, որ եթե հայոց մարմնները և հայոց պարանոցը պատկանում են Պարսից արքայից արքային, ապա հոգիները պատկանում են միայն մեկ տիրոց՝ Աստծուն: Եվ իսկապես, Ավարայրում հայերը ֆիզիկապես պարտություն կրեցին, սակայն դա պարտություն չէր հայ ժողովրդի համար, դա պարտություն չէր Հայ Եկեղեցու համար, դա հայութանակ էր, որովհետև այդ ճակատամարտում բյուրեղացավ հայ քրիստոնյահի հոգին, դարձավ շինչ, դարձավ հզոր, դարձավ աղամանու, որ այլևս չէր կարող դարերի ընթացքում փշրկել: Եվ այդ ոգին է, որ պահպանեց հայ ժողովրդին, այդ հոգին էր, որ չկարողացան հայթել ո՞չ արարները, ո՞չ սելցուկները, ո՞չ մոնղոլները և ո՞չ թուրքերը: Այդ հոգին է, որ ստեղծեց Նարեկացուն, Ծննդիալուն, Մոմիկին, Տրդատին, Տաթևացուն և հայ մշակույթի մյուս տիտաններին: Ի դարի սկզբին, երբ հայության ու քրիստոնության թշնամիները համոզվեցին, որ չեն կարող հայթել և կործանել հայի բյուրեղացած հոգին, ծրագրեցին ֆիզիկապես ոչնչացնել հայ ժողովրդին, այդպիսով վերացնելու համար հոգին հայության: Եվ կրկնեց Ավարայրը, այս անգամ արդեն ոչ թե Տղմուտի ափին, այլ՝ Արաքսի, ոչ թե Ավարայրի դաշտում, այլ՝ Սարդարապատի: Դարձայ ուզմադաշտ իշան թե՛ շինականները, թե՛ հոգևորականները և թե՛ զորքը: Այս անգամ սակայն հայության առջև դրված էր միայն մեկ նախատակ՝ հայութանակ, որովհետև եթե Ավարայրում բարոյական հայութանակը բավական էր, ապա Սարդարապատում միայն ֆիզիկական հայութանակն էր, որ կարող էր փրկել հայ ժողովրդին, և որ կարող էր պարզել մեզ այսօրվա շեն ու շող Հայաստանը: Վարդանանց հոգին էր, որ խոսեց ու հայուեց Սարդարապատում:

Այդ հոգին է, որ վերջին 70 տարիների

ընթացքում Սովետական Հայաստանում ծնունդ տվեց և զարգացրեց այն մշակութային-տնտեսական զարթոնքը, որ չեղ տեսալ հայ ժողովորդը իր պատմության երեք հազար տարիների ընթացքում։ Այդ հոգին է, որ այսօր խոսում է նաև մեր մեջ, այդ հոգին է, որ այսօր պահում է Սփյուռք դարձած հայ զավակներին, որոնք ծնված լինելով Ավատարակայում թե Ամերիկայում, Ասիայում թե Եվրոպայում, իրենց մայր հայրենիքն են համարում Հայաստանը, այն երկիրը, որ նրանցից շատերը չեն տեսել, գոյցե և ոմանք բախտ չեն ունենալու տեսնել։ Տարօրինակ է, անհականալի։ Ոչ։ Պարզապես նրանց մեջ խոսում է Վարդանանց հոգին։

Այդ հոգու շահակիրն է այսօր Հայ Եկեղեցու ղեկավարը, Հայ Եկեղեցու կաթողիկոսը, ազգի հոգևոր պետը, մեր բոլորի սիրելի Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսը։ Այսօր, սիրելի հավատացյաներ, Վարդանանց հերոսամարտի հետ միասին նաև մեր Վեհափառի անվանակոչության տոնն է։ Ուստի Եկեղեց միասին աղոթենք առ Աստված, որ Լուսավորչի գահը դեռ երկար, շատ երկար տարիներ փառավիրուիլ Վեհափառ Հայրապետի գահակալությամբ, որ Աստված Վեհափառի շնորհները միշտ անպակաս անհ Հայ Եկեղեցու գլուխց, հայ ժողովորի գլուխց, ապրեն նրանք Հայաստանում թե Սփյուռքում, ինչպես նաև մեր բոլորի գլուխց, որ հավաքվել ենք այստեղ աղոթելու։

«Ընորիք Տեառն մերոյ Յիշուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեան, Ամէն»։

Նոյն օրը, ժամը 13-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ ոգեկոչման հանդիսավոր ցերեկությունիվ Վարդանանց անմահ հերոսամարտին։

Հանդիսությունը կազմակերպել էր հոգեվոր ճեմարանի տեսչությունը։

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռուի միաբանությունը, Գերագոյն Հոգեւոր Խորիրդի անդամները, Մայրավանքի պատունությունն ու աշխատավորները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, հայրենի մտավորականության ներկայացուցիչներ և այլ հյուրեր։

Հանդիսությանը ներկա էր Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ստեփան Վարդանյանը։

Օրվա հանդիսավոր սուրբ պատարագին

և ոգեկոչման ցերեկությին ներկա էին նաև ոխտավորաբար Մայր Աթոռում գտնվող՝ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ Տ. Ֆիրայր արքեպոս. Մարտիրոսը, Փարիզի հայոց առաջնորդ Տ. Գյուտ եպո. Նազգաշյանը, Ծվեդիայի հայոց հոգևոր տեսուց Տ. Արտեմ եպո. Բերքերյանը և Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպո. Քեշիշյանը։

Հանդիսությունն սկսվեց Վեհափառ Հայութեանի արտասանած «Հայր մեր»-ով։ Սյնունեան հնչեց Հայկական ՍՍՀ պետական հիմնը։

Հանդիսության բացման խոսքով համեմետ եկավ Տ. Գյուտ եպո. Նազգաշյանը։

S. ԳՅՈՒԻՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԲԱՇՅԱՆԻ ԽՈՍՔԸԸ

Վեհափառ Տեր,

Տարիներու հետավորութենեն կոյիտենք երեք վիճակներ մեր պատմության սկզբան-վորության հետ կապված։ Առաջինը՝ Աստվածային առաքելության առաջալներու բերած հավատքի սերմերու ցանումն է ի Հայաստան աշխարհ։ Երկրորդը՝ կտեսնենք նոյն հայունության որպես շարունակություն, հաստատումը մեր հայրենի հողին վրա քրիստոնեական հավատքին՝ որպես սեւուական հաստատություն։ Ու ապա, լրումը որպես այս հաստատումներու, Աստուծոն հայտնությունը Սուրբ Մեսարոպի միջոցավ՝ մեր լեզուն տալով ամենուն։ Ու ատնց մեջ հայրության առիթ մըն է, որ կլեցնե մեր ժողովորդը աշխարհի բոլոր կողմերուն, ամենուրեք, Հայաստանի մեջ կամ Սփյուռքի։ Այս երեք վիճակներուն դարերու ամբողջ նվիրում մըն է, որ կգրավե մտահոգությունը մեր զավակներու։ Եվ այդ ընթացքին մեջ յուրաքանչյուրը կզգա կճրգինք ժառանգորդ և որդի։ Եվ սակայն մեզի որպես օրինակ ժառանգության և որդիության վիճակը կներկայանա Վարդանանց պատերազմով, որը կտեսնենք ամբողջությունը ժողովորդին՝ պահպանելու իր սրբությունները։ Բայրենիքը, հավատքը, լեզուն։ Այդ բոլորին մեջ չկա կշիռը, չկա պայման։ Ամբողջական նվիրում։ Ու մենք այսօր Ձերդ Վեհափառության անվանակոչության առիթով Վարդանանց պատերազմի այս տարեդարձին կուգանք պարզապես հաստատելու գիտակցությունը որդի և ժառանգ ըլլալու մեր հայրերուն, որոնք Վարդանանցով մեզի փոխանցեցին ավանդը մեր պատրիարքական ներկայության և հայութանակին։ Այս զգացումով է, որ բացման կհայտարարենք մեր այս հանդիսությունը, ամբողջապես նորոգելով մեր ուխ-

տը՝ մնալու գիտակից, որդի ըլլալու և ժառանքորդ անոնց օրինակին:

Այնուհետև օրվա խորհրդի շուրջ հակիրճ և բովանդակայից բանախոսությամբ հանդես եկավ հոգևոր ճեմարանի դասախոս Արմեն Հովսեփյանը.

ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԽՈՍՔԸ

«...զի բարձրացի կողմն ճշմարտութեան»
 «...Զերկնչեաք և չվախենանք հեթանուների բազմությունից և ոչ էլ մասնանցու մարդու անոնի սրի դեմ թիկունքներու դարձնեաք, որպեսզի եթե Տերը հաղոթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնեաք հրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով պարտելու այս պատերազմում, ընդունեաք (մահը) ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկություն չխառնեաք... Մասի ոչ իմացյալ մահ է, մահ իմացյալ անմահություն է»:

Այս խորքերը ակամատես պատմիչի՝ բաղրաբարքան Եղիշեի վկայությամբ հընչել են 451-ի մայիսին Ավարայրի հերոսամարտից առաջ հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի կողմից:

451 թվական, մայիս 26 ... վաղ առավոտ... Իր անկախությունը կորցրած, դարսվոր, անողոք և ուխտադրութ ոսխմերից պարտված, երկատված երկիրն Հայոց իր վերջին ուժերը հավաքել, օրհասական կրովի եր եկել ... Եկել էր հավատարիմ «Երեւելի մերոց դիցազնական օրինացս... Պատրաստ ի հալածան և ի մահ և յանձնայն նեղութիւնն և ի չարչարանս...» վասն սուրբ Հայրենիքի, վասն սուրբ Հավատքի, վասն ազգային արժանապատվությամ...

Սուշին անգամը չէր... Իր իններ փայլատակումներով և խավարումներով ին արտմության ընթացքում, սկսած իր աղեղնավոր նահապետից, ազգը հայկազնն եկել էր օստրի դեմ և հաղթել... Իսկ եթե պարտվել էր, ասք ժամանակավոր, սուկ շունչ առնելու, իր վիրավոր մեջքը ուղղելու, զի ի սկզբան ստեղծված է որպես «տառապանքի և մաքառումի անընկելի ապառաժ»... Զի

Ցեղը ապրիլ կուգեր և շլեաները ուրքերուն տակ թափել կուգեր, Իր կապանքները փշեր կուգեր, իր աշքերը սրբել, իր ձայնը որոտապ Ապրիլ կուգեր, ստեղծել կուգեր, պայծառորեն վերածնի կուգեր

այսին ասեր Սիամանթոն:

Եվ այսպես 451-ի գարուն... Հավերը լուս, հուս և սեր էին սաղմոսում: Գետերը սացե կապանքներից ազատված, փրփրաբաշ դեպ հայոց ծովակներն էին սպանում: Հորը ձմոն խոր քնից արթնացած երկունքով էր լեցուն...

Սակայն հայոց հոգիներում տագնապ էր ու սպասում: Ազգը հայկազուն պատասխան պետք է տար ոստիսին: Հրաժարվել սուրբ հավատքից, կործանել իր իսկ Միածնի հիմնած Եկեղեցին, վատել անհավատների ատրուշաները, որ հրանց խավարալեզու բոցերի մեջ այրվեն, մոխրանան, մեկրնումիշու վերանան հայոց լուսը, ծովը ծխացի, հիշատակները և Մեսրոպատառը... Որ Մասիսը վերափառ զոյց գագաթները կրկին կարկառած հայերեն չաղողի»...

Եվ հնչեց պատասխանը հայ երրորդության Լուսավորչի, Մաշտոցի և Վարդացի...

«Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՞չ հրեշտակները և ո՞չ մարդիկ, ո՞չ սուրբ և ո՞չ հորը, ո՞չ ջուրը և ո՞չ էլ որևէ այլ դառն հարված», «Ընտրեցաք զմահ աստուծապաշտութեամբ, քան զկեանս ուրացութեամբ...»:

Եվ երբ բացվեց մայիսի 26-ի առավոտը, Ավարայրի դաշտում մահվան համբիման աներեր, ինչպես լեռն սրբազն, կանգնած էր ազգը միարան: Այնուն էր ազգը հայկազուն՝ Վարդան զորավարի գլխավորությամբ և Հայոց հայրապետ Մեծն Հովսեփի ներկայությամբ:

Այնուն էին ուխտին հավատարիմ հայարարական տեղերի բոլոր ներկայացուցիչները՝ ամել արհավիրքի առջև միարան, պատրաստ համատակվելու սրբազն պատերազմում իրենց հապատակների մետ միասին: Եղիշեն ասում է. «Այնուհետև տեղը ծառայից ավելի չէր երևում, և ոչ էլ փափկանուն մեծացած ազատը՝ տառապալ գեղջուկից, և ոչ էլ մեկը մյուսից ավելի պակաս քաջության մեջ»:

Այնուն էին հայ զորականները իրենց գնդերով, որ հոգնել էին օստրի համար կովկելուց, և հայունակարու սրտերը հրանց բարախում էին միայն մեկ ցանկությամբ՝ ազատ տեսնել Հայաստան աշխարհը:

Այնուն էին Հայաստանյաց Եկեղեցու սուրբ հայերը: «Որովհետև նրանք էլ ամենին չվախեցան պատերազմի գալ հրանց մետ, քանի որ ոչ թե մարմնական էին համարում այդ կոփիվը, այլ հոգևոր առաքինության կոփիվ. ցանկանում էին իրենք էլ քաջ զինվորներին մահակից լինել»: Եվ եթե առաջներում հայ հոգևորականները ըստ սուրբության միայն իրենց աղոթքներով էին

մասնակից լինում մարտերին՝ քաջալերելով ուազմիկներին, ասաւ Ավարայրում «Եպիսկոպոսները և երեցները ու սարկավագները, սաղմուերգուներն ու գրակարդացողները, ամեն մեկը սահմանված կանոնով, իբրև սպառազինված և պատերազմի պատրաստված, կամենում են նրանց (հայ մարտիկների) հետ միասին հարձակել և շարդել ճշմարտության թշնամիներին»:

Այնուղիւ էին նաև «տիկնայք հայոց փափկասունք», իրենց հայութի, ամուսինների, որդիների և եղբարյների հետ միասին ըմպելու դառնության բաժակից: Եվ արդար էր նրանց բոլորի կոփը, զի՞ «Ճշմարտության միննոյն գոտիով ամրացրին իրենց մեջքերը թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք»:

Եվ կամանել էին նրանք ահարկու թշնամու զորքին դեմ-հանդիսան, որ բերում էր ավելի, շղթա, ատրուշաններ և խավար անսահման...

Ընտրությունը կատարված էր...

Բացիկ էր մայիսի 26-ի առավոտը:

Եվ հնչեցին մարտի փողերը... և «Երկու կողմերն էլ սրտմությամբ և մեծ քարկությամբ զայրացան և զազանացած զրությամբ միմյանց վրա հարձակվեցին. Երկու կողմերի աղմուկն ու աղաղակը ճայռում էր ինչպես իրար խառնված ամառի միջից, և ձայների դղորյունը շարժում էր լեռների քարանձավները: Բազմաթիվ սաղավարտներն ու զրահապատկած զրականների զենքերը փայլում էին ինչպես արևի ճառագայթների շղթեր: Նաև բազմաթիվ սուսերների շղթալուց և բազմախուռն նիզակների ճումներուց կարծես ահազին կրակ էր թափվում երկնքից»...

Կենաց և մահու կոփ էր մղում ազգը հայկազուն... Եվ չնայած թշնամին թվով մեծ էր մոտ երեք անգամ, և գուցե հեշտ հայթանակի սին հույսեր էր փայտայում, տեղի տվեց, զի՞ քաջ Վարդանը «այնային տագնապ ու իրարանցում գցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Մատյան գնդի հաստատուն կազմակերպությունը քայլվեց, ցրիվ եկավ, և նա դեռևս պարտություն չկրած փախուս տվեց»:

Կենաց և մահու կոփ էր մղում ազգը հայկազուն...

«Ընկած դիակների թիվը այնքան մեծ էր, որ նմանվում էր խորդուքորդ քարակուլուների: «...ծաղկալից դաշտերը լցվեցին հորդահու արյունով»:

«...կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնուղիւ, ուր և հենց ինքն էլ արժանի երավ ստանալու կատարյալ նահատակվության պահը»:

«Եվ պատերազմի զրոծը երկարելով՝ օրը տարածամեց և երեկոյան կողմ դադա-

րեց... ոչ թե մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ որուս գալով՝ երկու կողմերն եւ պարտություն կրեցին»:

Եվ հահատակվեցին՝

Մամիկոնյաց ցեղից քաջ Վարդանը հարյուր երեսուն և երեք մարդով...

Խորխուռունյաց ցեղից ...

Պալունյաց ցեղից ...

Դիմաքայան ցեղից ...

Քաջերունյաց ցեղից ...

Գնունյաց ցեղից ...

Հնծայնոց ցեղից ...

Սրվանձտյան ցեղից ...

Նահատակվեցին, որպեսզի հաստատուն մնա ցեղը հայկազուն, նահատակվեցին, որ անշեք մնա սուրբ Լուսավորչի կանթեղը, նահատակվեցին ի պատօամ գալիք սերունդների, որ չընկնածն արանք երթեք և չմոլորվեն պատմության քառուղիներում, նահատակվեցին, որ իրենց սուրբ հոգիների լույսով առաջնորդեն ազգը հայկազուն դեպանահություն...

Եվ վարդանաց պատերազմը վերջ չունեցավ ...

Իսկ ակիզբն էլ գալիս էր դարերի խորքից՝ որպես նախահոր նետ դեպ գալիքն արձակված... Հետո եղան հայթանակները անհամար, դառն պարտությունները, հույսի փայլատակուններ՝ որպես բագրատունյաց Անիի թագավորություն և Կիլիկիո թագավորություն՝ հայ ճակատագրի անթափանց խավարի մեջ... Անմար է Վարդանաց սուրբ հոգիների լույսը...

Եվ վերջապես՝ ցեղն հայկազուն հասավ իր անկախության վերականգնմանը և Խորհրդային պետականության հաստատմանը:

Աներեր է ցեղը հայկազուն, անշեք է սուրբ Լուսավորչի կանթեղը, հայ սերունդները երթեք չընկնածնեցին և չմոլորվեցին պատմության քառուղիներում և շարունակեցին նրանց գործը. չէ՛ որ նոր գարուններ այսի գային»...

Վաճի, Ձեյթունի, Սասունի հերոսամարտեր... Այնուղիւ են Վարդանանք... Սարդարապատի հերոսամարտ...

Այնուղիւ են Վարդանանք... Եվ մեծ Հայեանականը...

Վարդանյաց զավակները, հավատարիմ սուրբ նախանյաց հիշատակին, նետվեցին մարտի իրենց եղբայր ժողովուրդների հետ հանուն անկախության, հանուն ազատության, հանուն մարդկային արժանապատվության, մինչև ատամները զինված ովտանդրության թշնամու դեմ: Եվ հզոր աղյուծի նրանց մոնշունը լսվեց Վոլգայի ափերին, լսվեց Կուրսկի մոտ, Խորհրդային հայրե-

Այսի մայրաքաղաքի պատերի տակ, Բալթիկայում և վերջապես, որպես Վարդանանց արժանի զավակներ, հայ դյուցազուները իրենց սուրբ հաղթանակով դրեցին պատյան պարտված թշնամու որջում... «Զիրդրացի կողմն ճշմարտութեան»:

Անցել են դարեր... Կզան ու կանցեն նորեր: Երգել են պատմիները, երգել են բանաստեղծները, երգել են գուսանները իրենց բամբոներով, երգել են արվեստագետները... Երգել են փառքն անմահ Վարդանանց: Եվ պիտի երգեն...

Բանախոսությունից հետո հոգևոր ճեմարանի սաները, հենկավարությամբ հոգևոր ճեմարանի դասախոս Խորեն Պալյանի, ոգեշչված կատարեցին Սրբոց Վարդանանց նվիրված շարականները և Մակար Եկմալյանի «Ազգային մատթանք»-ը՝ մենակատարությամբ հոգևոր ճեմարանի Գ լա-

րանի ուսանող Էդվարդ Միրզախանյանի:

Ապա հոգևոր ճեմարանի Ե լսարանի ուսանող Վազգեն սրբ. Պերպերյանը արտասանեց Վ. Թերեխյանի «Խորհուրդ Վարդանանց», իսկ Դ լսարանի ուսանող Անդրանիկ Տերտերյանը՝ Ավ. Խամբակյանի «Ռազմական համատեղծությունները»: Ե լսարանի ուսանող Գևորգ սրբ. Աջապահյանը արտասանեց Ղևոնյանց և Վարդանանց նվիրված ձեռագրերից դուրս գրված անտիա տաղեր:

Հոգևոր ճեմարանի վերակացու, բանաստեղծ Վաշագան Հովհաննեսիսանը արտասանեց իր «Ավարայրում» հայրենաշոնչ բանաստեղծությունը՝ գրված մասնավորաբար սույն հանդիսության առթիվ: Արտասանությունն ուղեկցվեց հոգևոր ճեմարանի երգականմբ: Երգակցությամբ (Երածշուրթունը՝ Կոմիտաս Քեշիշյանի):

Ա Վ Ա Ր Ա Յ Ո Ւ Խ

Ոտքի ելավ աշխարհն Հայոց՝ հայրենայց սուրբ սիրով լի,
Շեր ու մանուկ, ոգին ամրող Հայաստանյաց աշխարհի.

Ոտքի ելավ եկեղեցին՝ խաչն իր կրծքին զերդ վահան,
Շուրթին աղոթք, սրտում ցասում, ձեռքին սուրբ հաղթական...

Ամպերի պես երկու հովա բանակները լեռնացան,
Տղմուտ գետի զույգ ափերին ծաղիկները դալկացան,
Շոնդացին ահեղագոշ զրահները երկուառեք,
Ու շողացին Ավարայրում հազարավոր ճետ ու տեգ...

Կովում էին քաջերն հայոց՝ այնպես հուժկու, մոլեգին,
Որ զարկերից նրանց հօդոր արքն էր թնդում ահագին.
Զարկում էին և մերժ ընկնում մոնչունով ահարկու,
Խլում էին մահն իրարից՝ կյանք պարզում մեկ-մեկու...

Ոտքի ելան բոլորը մեկ՝ հովիվ, ուսմիկ ու ունչապար,
Վրեժով էր Հայոց երկրում լցվել ամեն թուփ ու քար.
Ոտքի ելան տիկնայքն հայոց՝ ցաման բոցով հրդեհված,
Սրյունարբու պարսից զորքի ու փղերի դեմ հարբած...

Եվ այն օրից աշխարհն Հայոց ծնեց Վարդան ու Արտակ,
Որոնց կյանքով ոգի առավ երկիրը մեր բովանդակ.
Ու տես, այսօր հողագնոյի ամեն ծայրում հայը կա,
Հայը ամեն երկնի սրտում ունի արևն իր անմահ...

Ավարայրից ծնվեց օրն այս՝ կյանքով ազատ մեկընդմիշտ,
Որ ծաղկի է փոխվել Հայոց երկրում ամեն վերք ու վիշտ.
Ցնծա երկիր, ցնծա հավերժ դու հաղթական աշխարհում,
Զի այսօր էլ ունես քեզ հետ քաջ Վարդաններ դյուցազուն...

Հոգևոր ճեմարանի երգչախումբը, դեկապարությամբ հոգևոր ճեմարանի երաժշտության դասախոս Կոմիտաս Քեշիշյանի, կատարեց «Տեսեք Սղավճին» երգը:

Հանդիսավոր գեղարվեստական մասից հետո փակման խոսք ասաց Տ. Վազգեն Եպս. Քեշիշյանը.

Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՇԻՇՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Այսօր աշխարհի բոլոր անկյուններուն մեջ, որ հայ ծողովուրդ կա, կտոնեն արմենական հոգի տոնը: Այսօր Վարդանանց հաղթամակի օրն է, և մենք զայն միշտ տոնած ենք, որովհետև ուզած ենք հաղորդվիլ անոնց հոգիով, ուզած ենք անոնց մով ներշնչվիլ և դիմադրել գալիքին: Տարօրինակ, բայց սքանչելի ծողովուրդ ենք: Տարօրինակ, որովհետև մեր անհամաձայնություններուն մեջ անգամ կարողացած ենք ապրի, կարողացած ենք հասկնալ իրար: Բայց սքանչելի ծողովուրդ եղած ենք, որովհետև կրցած ենք ըմբռնել և ժառանգել այն ոգին, որ պատկանելիության ոգին է: 451 թ. մայիսի 26-ի առավոտուն ամբողջ հայ աշխարհը, Հայաստանը ուրի կանգնեցավ լինելության պատերազմին համար: Ըլլալու և չըլլալու պատերազմ էր: 1918-ի մայիսի 26-ին Սարդարապատի ճակատամարտին մեջ ամբողջ հայ ծողովուրդը հոն էր, լինելության, ըլլալու կամ չըլլալու համար: Տարօրինակ զուգարիպություն. 1893 թվականի հոյեմբեր 29-ին կվախճաներ Կիլիկյան հայոց թագավորության վերջին թագավորը և 1920 հոյեմբեր 29-ին արև կծագեր Հայաստան աշխարհի վերև և Հայաստան աշխարհը իր վերածնունդի ճանապարհին մեջ կմտներ: Բայց հոյակապ ծողովուրդ ենք, որովհետև գիտենք ոգեկոչել, ապրի, գգալ ու խորապես ըմբռնել մեր պատմությունը, ներշնչվիլ անով, ապրիլ անով: Ու դարեր շարունակ ամենուրեք մեր գաղթականության մեջ աշխարհի ամեն անկյունը տոնած ենք հայկական այդ ոգին: Այսօր ինձի համար հուզիչ օր է. եկած արտասահմանեն, ծնած արտասահմանին մեջ, մեծցած՝ դիմակալով օտարության բոլոր ճնշումները, ըլլալ այն երկրին մեջ, որուն

կպատկանիմ, ըլլալ այն հավիտենական հաստատության կամարներուն մերքն, որուն ուստավորն եմ և նվիրվածը, և բերել արտասահմանի հայության ամբողջ զգացումները: Հայ մնալու համար լինելության պայքար, Վարդանանց պայքարը կմղենք ամեն օր: Եվ մենք պետք ունինք ուժի, ներշնչումի, մենք պետք ունինք մեր եղբարյան նորուն, որոնք հոգիով մեզ գրկեն-տաքցնեն հայրենի աշխարհնեն: Ինչ լավ է ձեզի համար ըլլալ այս ապահով հողին վրա, այդ հողին ստանալ ուժ և կորով, և վերապրի ամբողջ պատմությունը և հպարտությամբ հայ գգալ: Մենք Վարդանով կներշնչվինք, Դավիթ Բեկով ուրի կլանգնենք, Սարդարապատով կավլյունավորվինք, Անդրանիկով կլանանք և վերածնած Հայունիքի ներշնչանքով կոյմակալենք Սփյուռքի մեջ մեզ շրջապատող բոլոր դժվարությունները: Մեր հոգիներուն մեջ փոխան սուրի և խաչի, կա Ամենայն Հայոց Հայրապետությունը, Սրբություն Սրբոց Ս. Էջմիածինը, որուն վրա, ինչպես Սուքել Դավիթինցի կըսե, կա ու կմնա ազգն հայոց: Մեր Ղևոնդ երեցը Ամենայն Հայոց Հայրապետն է, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջինը, որ մեր հոգիներուն մեջ մեզ միշտ կմղեն հառաջ, դեպի մեր ինքնությունը: Մեր հոգիներուն մեջ փոխան սուրի կա մեր Հայունիքը, որուն երազանքով ինքոհերթին կպահենք ամուր՝ բոլոր օտարացումներու դեմ և անով ներշնչված մեր Ավարայրի պատերազմը կպատերազմինք:

Եվ այդ պատերազմին գետնին վրա թող Սատված անսասան պահե Հայոց աշխարհ՝ Խորիրային Հայաստանը, թող Սատված անսասան պահե Ամենայն Հայոց Հայրապետություն Սուրբ Էջմիածինը, և Վազգեն Ա կաթողիկոսը դառնա մեր Մովսեսը, որ իր դալար գավազանով մեզ առաջնորդե դեպի մեր ամբողջական ինքնությունը, ամբողջական Հայունիքը, ամբողջական խաղաղությունը:

Ոգեկոչման հանդիսավոր ցերեկույթն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՎՈԼՈԴՅԱ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

